ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«24» մարտի 2025 թվականի N: 119 - Ա ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N 19 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԳԵՎՈՐԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 60-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Գևորգ Կարապետյանի 2025 թվականի մարտի 24-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Գևորգ Կարապետյանի անաշխատունակության մեջ գտնվելու կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի գործառույթների իրականացումը 2025 թվականի մարտի 24-ից վերապահել նույն կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Նաիրա Վարդանյանին՝ մինչև Գևորգ Կարապետյանի աշխատանքի վերադառնալը:

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է